

գլխա, ուր այդ ապրանքը ամենաընտիրն է համարուում և ամենաբարձր գնով ծախուում, քսան միլիօն ըուբլու միս ու մսացու կենդանիներ է արտահանուում:

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր Դանիացի միջին հաշուով ունի խնայողական գանձարաններու հարիւր երեսուն հինգ ըուբլի, իսկ Ռուսաստանում հազիւ եօթ ըուբլի ունի ոուսը:

Ապա հեղինակը խօսուում է գիւղատնտեսական դպրոցների մասին զանազան երկիրներում, ապացուցանուում է, որ մեր ժամանակի երկրագործը պիտի ունենայ ոչ միայն ամուր թիկուներ ու զօրեղ բազուկներ, այլ և լուսաւոր գլուխ:

Յետոյ հեղինակը խօսուում է գիւղատնտեսական ձմերային ու լրացուցիչ դպրոցների կարեւորութեան մասին և ցոյց է տալիս այդպիսի դպրոցների ծրագիրը:

Թող մեր նոր դպրոցը, ասուում է հեղինակը, հանդիսանայ մի սերմնացան, որ առողջ սերմեր ցանելով մեր գիւղացու հոգեկան աշխարհում, դարձնէ նրա միտքը աւելի զուարթ ու լուսաւոր:

Ներկայ ժամանակ, երբ ամենուրեք հայ գիւղացին տառապուում է յետին աղքատութեան մէջ, ամեն մի հայի, մանաւանդ հայ ինտէլիգենցիայի, հայ հոգեւորականի, հայ ուսուցչի և հայ բարերարի պարտականութիւնը պիտի լինի լուրջ կերպով մտածել Աշէրօնի գաղափարների իրագործման համար:

---

## 2. Չ Ր Ո Յ Յ Ն Ե Ր

### Վ. Փափագեանի

Վրդանէս Փափագեանը շատ վաղուց է գրուում, բայց ամենից սակաւ գնահատուած հեղինակներից մէկն է: Փափագեանը շատ ինքնուրոյն գրող է, նրա երկերը բո-

լորովին ջոկուում են մեր բոլոր միւս վիպասանների երկերից, որովհետեւ նա վիպասան չէ, նա նոյնիսկ կարծես իրական կեանքի հետ գործ չունի: Նա ըստ մեծի մասին առակներ, զրոյցներ, այլաբանութիւններ գրող է: Բայց նա տաղանդաւոր գրող է, որովհետեւ նա երևակայական, այլաբանական զրոյցների մէջ էլ բանաստեղծ է, ճշմարտութեան և հոգեբանութեան դէմ չէ մեղանչում, նրա նկարագրած երևակայական երևոյթները, զրոյթիւնները և փաստերը իրական կեանքում կարող են եղած լինել կամ լինել գէթ փոխաբերական մտքով: Նա նոյնպէս կեանք է նկարագրում, բայց այլ ձևով և այլ կեանք, բայց ոչ մեզ շրջապատող, առօրեայ կեանքի արտայտութիւնները: Եւ այս նրանից է առաջ գալիս, որ նա երևի մեր կեանքում չի գտնում այնպիսի հերոսներ, որոնք նրա վսեմ գաղափարների մարմնացնող լինեն, որոնք կարողանան արտայայտել նրա մտքերը, ձգտումները, զգացմունքները: Նա մարդասիրական բարձր գաղափարների, սիրոյ, ազատութեան, ժողովրդի, ամբոխի երջանկութեան քարոզիչ է և սոցիալական գաղափարների մարգարէ: Նրա զրոյցներից և առակներից շատերը նոյնիսկ ինքնուրոյն չեն, այլ առնուած են ուրիշ ազգերի ժողովրդական գրականութիւնից, բայց այս հանգամանքը չէ նսեմացնում Փափազեանի նշանակութիւնը իբրև հայ գրականութեան մէջ տաղանդաւոր հեղինակի, որ տարածում է հասարակական օգտաւէտ գաղափարներ բանաստեղծական լեզուով:

Փափազեանը ժողովրդի տանջանքների երգիչ է, նա յեղափոխական զգացմունքներ և գաղափարներ զարթեցնող է, խաւարի և բռնութեան դէմ, ուժեղների և կեանքի բարիքը վայելողների, ամբոխի աշխատանքը շահագործողների դէմ բողոքող բանաստեղծ է: Ափսոս, որ ես ծանօթ չեմ Փափազեանի կեանքի մանրամասնութիւնների հետ, որովհետեւ նրա կենսագրութեամբ կարելի է շատ բան մեկնել նրա երկերի ուսումնասիրութեան ժամանակ: Շատ հաւանական է, որ նա Թիւրքահայաստանում

և Պարսկաստանում ապրած ժամանակ է ներշնչուել տառապած ժողովրդի շարժարանքները երգելու հակումով և գրել է արևելեան բանաստեղծութեան մէջ հնումը տարածուած ձևով, այսինքն առակներով և զրոյցներով է արտայայտել իւր մտքերը, զգացմունքները, իւր ժողովրդասիրական հակումները և բնազդը: Փափագեանի լեզուն ևս ինքնուրոյն է, շատ հարուստ, ուժգին և բանաստեղծական: Շատ տեղ Փափագեանի պատմութիւնը քնարերգութեան տպաւորութիւն է թողնում, կարծես թէ ոտանաւոր է ընթերցողի առաջ: Գրելու ձևը նոյնպէս գեղարուեստական, հեղինակի բերանով համարեա ոչինչ չէ պատմում նա, այլ գործող անձինքներն են, որ գործում են, մի հանգամանք, որ ապացուցանում է նրա տաղանդի ոյժը, էպիքական երկեր գրելու ձիրքը: Հէնց առաջին երկու զրոյցներում Փափագեանը երգում է սիրոյ ոյժը և ստեղծագործական նշանակութիւնը աշխարհում: «Փահրադ և Շիրին» պարսկական պօէմայի բովանդակութիւնը այդ երկու սիրոյ էակների սիրոյ խորտակումն է: Շիրինը յանձնում է Փահրադին երջանկացնել Իրանն ու թուրանը խլելով չար ոգու ձեռքից հիւրի-փերինների կեանք տուող առասպելական գետը, որ «Զուլի—Շիր» անունն էր կրում: Այս առաջարկութիւնը Շիրինը անում է Փահրադին, որովհետև վերջինս կամենում էր ապացուցանել թէ հրքան շատ էր սիրում Շիրինին:

Խօսիր, իմ Շիրին, ասա, դրդիր ինձ, գործել եմ ուզում. սէրն է սրտում. նրա կայծերը երկինք են ձգտում, որս են որոնում: Ասա, կուզես այդ գոռ լեռները հարթեմ—դաշտ շինեմ, անապատի մէջ դրախտ կառուցանեմ, աւերիչ գետի հոսանքը դարձնում, չար ոգիներին ճզմեմ. հալածեմ, աշխարհը միմիայն սիրոյ, բարութեան մի հովիտ փոխեմ...

Եւ ելաւ Փարհադը, առաւ տապարը, զինեց իր սիրոյ բոցոտ կրակով: Գնաց Փարհադը, մտաւ լեռները, իջաւ անդունդներ, տապալեց ժայռեր և ճգնեց

անմահական շուրը գտնել և աշխարհին նուիրել: Չար ոգիները գետը քաշեցին խորքերը տարան, իսկ Ֆարհադը աւելի յամառութեամբ պեղեց ու պեղեց: Տարիներ անցան: Ֆարհադը վերջապէս գտնում է գետը և հանում գետնի երես, բայց յանկարծ քամին ձայնում է, որ Շիրինը երկար սպասելուց մեռել է: Յանկարծ ջրերը ետ ընկրկեցին: Առանց Շիրինի կեանքը Ֆահրադի համար այլ ևս գին չունէր և նա տապարով վերջ տուեց կեանքին, իսկ նրա արիւնը ոռոգեց գետինը: Շիրազի հողում, տարիներ յետոյ բուսեց արիւնոտ ծաղկով և արիւնոտ պտղով նոննու ծառը, որի պտուղների մէջ երկու միմեանց կծկուած մասեր կան, որպէս երկու միմեանց միացած սրտեր:

Նոյն գովաւորը, սիրոյ ամենակարող ուժը արտայայտուած է և միւս զրոյցի մէջ, որ «ինչու՞ն է ուժը» վերնագիր ունի: Հնդկաստանում մի թագաւոր շատ սիրում էր մեծ շէնքեր, պալատ ու մզկիթ, պարտէզներ և աշտարակներ շինել:

Մի օր թագաւորը իւր վէզիրների հետ գնում է դիտելու թէ ինչպէս էին գործաւորները ահագին քարեր շալակում և տանում: Մինչդեռ շատերը տքնում էին ծանր բեռների տակ՝ մէկը նրանցից առանց օգնութեան մենակ էր շալակում ու երգը բերանում անդադար կրում: Թագաւորը զարմացաւ և հրամայեց նրան մի օր, որ քարէ սիւնի պատուանդանը կանգնեցնի: Մօտեցաւ Հասանը քարին, կանչեց Աստծու հօր անունը և երգելով բարձրացրեց և դրեց սիւնի տակ: Հրամայեց թագաւորը իմանալու Հասանի ուժի գաղտնիքը: Մեծ վէզիրը գնաց մի օր Հասանի խրճիթը հիւր և տեսաւ, որ Հասանը ունէր մի սիրող կին, որի հետ նա իրան ամենաերջանիկ մարդն էր համարում: Թագաւորը այս բանին չհաւատաց և հրամայեց նրա կնոջը և երեխային խլել, որպէսզի տեսնի թէ ինչպէս պիտի աշխատէր Հասանը սրանից յետոյ:

Միւս օրը Հասանը եկաւ աշխատանքի տեղը, բայց

այլևս նա չէր կարողանում նոյն իսկ մանր քարեր շար-  
 փելու, որովհետև նրա ծնկները ծալուում էին ու թևերը  
 կարկամում: Այս զրոյցի միտքը նոյնպէս այն ճշմարտու-  
 թիւնն է, որ չկայ աշխարհում աւելի մեծ քաջալերիչ,  
 մեծ բժիշկ, քան սէրը, անկեղծ ու վառ, մշտատև սէրը,  
 որ իր ժպիտով հերոս է շինում, քարեր է փշրում, արգելք-  
 ներ ջարդում և որի առաջ աշխարհը անզօր է և ցաւը  
 թզուկ: Ոյժը սիրոյ ծնունդ է, սէրն է, որ կարող է լեռ-  
 ներ շարժել, աշխարհը փոխել, բոլոր անիրաւութիւննե-  
 րը անզօր դարձնել և ամեն մի փուշ վարդի փոխանակել  
 —ասում է զրոյցը:

Այս այն սիրոյ վարդապետութիւնն է, որ դարերի  
 ընթացքում քարոզել են լաւագոյն մարդիկ, մեծ բարոյա-  
 գէտները, մեծ փիլիսոփաները և գիտնականները, որոնք  
 մտածում են լաւագոյն կեանք ստեղծել ժողովրդի մե-  
 ծամասնութեան համար:

Մի ուրիշ զրոյց «Առուակ» վերնագրով գաղափարի  
 ոյժն է ներկայացնում: Մի թագաւոր հրամայեց հպատակ-  
 ներին մի այնպիսի պարտէզ շինել, որի մի ծայրից մինչև  
 միւսը գնալու համար օրեր էին հարկաւոր: Դժբախտ  
 ամբոխը քրտնաջան աշխատանքով տարիների ընթացքում  
 տնկում էր պարտէզը: Թագաւորը հրճուանքով շրջում էր  
 այդ դրախտի մէջ, Բայց մի օր անյայտ լեռներից եկաւ  
 մի առուակ և մտաւ արքայի կառուցած մեծ պարտէզի  
 մէջ: Թագաւորը ծիծաղեց և հրամայեց թողնել, որ հոսէ  
 առուակը ծառերի տակով և ոռոգէ նրանց: Նորեկ վտակը  
 սակայն հետզհետէ առատացաւ և ապա գետակի փոխուեց,  
 հետզհետէ այնքան մեծացաւ, որ դուրս եկաւ պարտէզից  
 և սկսեց ջուր տալ թագաւորի հպատակների արտերին:

Աւելի և աւելի մեծանալով գետը հեղեղեց թագա-  
 ւորի պարտէզը, քանդեց ու տապալեց պալատները և ոչ  
 մի պատնէշ չկարողացաւ դիմադրել նրան, որ սակայն  
 բաժան-բաժան լինելով ժողովրդի դաշտերը ջրում էր և  
 բարւոքում հպատակների կեանքը:

«Նրկու թռչուն» զրոյցի մէջ հեղինակը պատմում է, թէ ինչպէս վանդակում փակուած թռչուններից մէկը վատահուժիւն ունեցաւ վանդակը բաց եղած ժամանակ թռչել և ազատութիւն գտաւ, իսկ միւսը, որ աւելի երկչոտ էր և գերութեան ընտելացած, չկամեցաւ ազատուել: Միւս բոլոր զրոյցներն էլ նոյնպէս գաղափարական և մէկը միւսից գեղեցիկ: Փափագեանի լեզուի մասին մի փոքր հասկացողութիւն տալու համար բերենք մի կտոր, որ կարծես թէ յանգերով գրած մի քնարերգ է:

Նւ գիտէր Յահրադը սիրել Շիրինին: Սիրել այն սիրով, որ աչքը գետնից ամպին է ձգում, ժայռեր հալցնում, ճահիճների տեղ վարդեր—աճեցնում, անապատի մէջ ծաղիկ բուսցնում: Սիրել այն սիրով, որ չէ խոնարհուում, կծկուում, ստրկանում, այլ որ ներշնչում է, ճղճիմ թզուկին հսկայի փոխում:—  
Մի ուրիշ տեղ զրոյցի հերոսուհին այսպէս է արտայայտում իւր սէրը. Ջալիէն ասում է Հասօին.

Նս քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհը արևին և բոյսը հողին:

Փափագեանի այս զրոյցները ընթերցանութեան շատ հաճելի նիւթեր են և բոլոր դպրոցների գրադարանների գարդը կարող են լինել: Գրականութեան ուսուցիչը շատ օգտաւէտ դասախօսութիւնների առարկայ կարող է ունենալ, եթէ աշակերտներին կարդայ այս գիրքը լուրջ բացատրութիւններով: Նս մի անգամ կ'վերադառնամ Փափագեանի մասին նորից խօսելու:

Գ. Յնգիրարեան

### ՄՏԱՑՈՒՄ ԳՐՔԵՐ

Др. С. А. Майсурянцъ Химіотерапія. „606“ при сифилисѣ. Тифлисъ 1910 тип. Т. Ротинянцъ. Բժ. Մայսուրեանցը այս գեկուցումը կարգացել է կովկ. կայս. բժշկ. ընկերութեան ժողովում: Մա. Կանայեանց. Ջոշանց տուն կամ Սասմայ ծռեր վէպի